Արձանագրություն թիվ 1

Նիստը կայացել է 2025թ. հոկտեմբերի 22-ին:

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներից 8-ը, բացակա՝ 3 անդամ: Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էին «Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը, «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեններն ու վարչատնտեսական մասի համակարգողները:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատման մասին /հաղորդող՝ Ռ. Շահվալադյան/
2. Միասնական խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության մասին /հաղորդող՝ Ռ. Շահվալադյան/
3. Աշխատակարգի հաստատման մասին /հաղորդող՝ Գ. Ավետիսյան/
4. ՊՈԱԿ-ների ներքին կարգապահական կանոնների, կազմակերպական կառուցվածքի, հաշվետվությունների, աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների հաստատման մասին /հաղորդող՝ տնօրեններ/
5. ՊՈԱԿ-ների ներքին գնահատման արդյունքների, ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի մասին /հաղորդող՝ տնօրեններ/
6. 2025-2026 ուստարվա զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցի մասին /հաղորդող՝ «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ. Հարությունյան/
7. Այլ հարցեր

Միասնական խորհուրդը ձևավորվել է ՀՀ Շիրակի մարզպետի՝ 16.10.2025 թվականի 592-Ա որոշմամբ՝ ներքոհիշյալ կազմով.

Անուն-ազգանուն	Հաստատություն	Խորհրդակցական մարմին	Կոնտակտային տվյալ
Արմինե Մկոյան	ՀՀ ԿԳՄՍՆ	ՀՀ ԿԳՄՍՆ կողմից առաջադրված	093 91-74-01 armin1982@mail.ru

Գրիգոր Ավետիսյան	ՀՀ Շիրակի մարզի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզպետի կողմից առաջադրված	055 19-11-66 grigor87avetisyan@gmail.com
Ռուզաննա Շահվալադյան	ՀՀ Գյումրու համայնքապետարան	ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի կողմից առաջադրված	094 20-22-34 ----------
Այդա Նալբանդյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված	094 30-20-12 aidanalbandyan2@gmail.com
Էմմա Գրիգորյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Ծնողական խորհրդի կողմից առաջադրված	094 01-61-61 emmigrigoryan360@gmail.com
Լիլիթ Սիմոնյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված	093 06-97-22 mkhitaryansimonyan@mail.ru
Մանե Կարապետյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Ծնողական խորհրդի կողմից առաջադրված	077 97-93-98 mane.kv@mail.ru
Թամարա Մկրտչյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված	093 45-35-90 mkrtchyantamara@gmail.com
Քնարիկ Հարությունյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Ծնողական խորհրդի կողմից առաջադրված	077 19-06-03 -------
Գայանե Մուրադյան /Բատմանովա/	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված	077 17-62-84 batmanovagayan929@gmail.com
Լիլիթ Մաթևոսյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Ծնողական խորհրդի կողմից առաջադրված	055 30-81-55 matevosyan1580@gmail.com

Լսեցին 1՝

Միասնական խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության մասին /հաղորդող՝ Ռ. Շահվալադյան/:

Կարգի համաձայն՝ նիստը վարեց միասնական խորհրդի՝ տարիքով ավագ անդամ Ռուզաննա Շահվալադյանը: Ռ. Շահվալադյանի խնդրանքով բոլոր անդամները ներկայացան, ապա վերջինս հաստատման ներկայացրեց նիստի օրակարգը:

Որոշեցին՝

Հաստատել միասնական խորհրդի անդրանիկ նիստի օրակարգը:

Լսեցին 2՝

Կառավարման խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության մասին /հաղորդող՝ Ռ. Շահվալադյան/:

Անդամները միասնական խորհրդի նախագահի թեկնածու առաջադրեցին Գրիգոր Ավետիսյանին: Փակ գաղտնի քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությամբ ընտրվեց Գ. Ավետիսյանը:

Քարտուղարի թեկնածու առաջադրվեց Թամարա Մկրտչյանը: Վերջինս ևս խորհուրդի անդամների ձայների մեծամասնությամբ ընտրվեց խորհրդի քարտուղար:

Որոշեցին՝

Հիմք ընդունելով փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ Միասնական խորհրդի նախագահ նշանակել Գրիգոր Ավետիսյանին, քարտուղար՝ Թամարա Մկրտչյանին:

Լսեցին 3՝

Աշխատակարգի հաստատման մասին /հաղորդող՝ Գ. Ավետիսյան/:

Առաջնորդվելով ՀՀ ԿԳՍՍ նախարարի 03.03.2025 թվականի 603 Ա/2 հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի գործունեության աշխատակարգով»՝ միասնական խորհրդի նորընտիր նախագահ Գրիգոր Ավետիսյանը ևս մեկ անգամ անդրադարձավ խորհրդի գործառույթներին, նիստեր գումարելու հաճախականությանն ու ընթացակարգին, ապա

առաջարկեց խորհրդի նիստերը արձանագրելու համար ընտրել էլեկտրոնային տարբերակ՝ ստեղծելով էլեկտրոնային պանակ:

Որոշեցին՝

Հաստատել միասնական խորհրդի աշխատակարգը: Միասնական խորհրդի նիստերի արձանագրությունների պանակը վարել էլեկտրոնային ձևաչափով:

Լսեցին 4՝

Հաշվի առնելով, որ ՊՈԱԿ-ների ներքին կարգապահական կանոնները, կազմակերպական կառուցվածքը, հաշվետվությունները, աշխատողների ու սովորողների վարքագծի կանոնները սահմանված ժամկետներում չեն հաստատվել միասնական խորհրդի բացակայության պատճառով՝ հաստատության տնօրենները միասնական խորհրդի ձևավորման առաջին իսկ նիստին ներկայացրին համապատասխան փաստաթղթերը՝ քննարկման և հաստատման:

Որոշեցին՝

Հաստատել ՊՈԱԿ-ների ներքին կարգապահական կանոնները, կազմակերպական կառուցվածքը, հաշվետվությունները, աշխատողների ու սովորողների վարքագծի կանոնները:

Լսեցին 5՝

Խորհրդի ձևավորման առաջին իսկ նիստին տնօրենները ներկայացրին նաև ՊՈԱԿ-ների ներքին գնահատման արդյունքները, ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը:

Որոշեցին՝

Տնօրենների հաղորդումներն ընդունել ի գիտություն:

Լսեցին 6՝

«Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց»-ի տնօրեն Լ. Հարությունյանը կարգի համաձայն խորհրդին ներկայացրեց 2025-2026 ուստարվա զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը:

Որոշեցին՝

Լ. Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Միասնական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան

Քարտուղար՝ Թ. Մկրտչյան

Անդամներ՝ Արմինե Մկոյան

Ռուզաննա Շահվալադյան

Միդա Նալբանդյան

Էմմա Գրիգորյան

Քնարիկ Հարությունյան

Գայանե Մուրադյան

24.10.2025թ.